ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<08>> ----------հոկտեմբեր----------2025թ. N ՄՈ/657 -Ա

ք. Արմավիր

«ԱՐԵՎԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Արուսյակ Ավագյանի 2025 թվականի հուլիսի 4-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Արևիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արուսյակ Ավագյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդ՝ 2025 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 15-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Արուսյակ Ավագյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արևիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արևիկի միջնակարգ դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Ինգա Մարկոսյանին:

3. «Արևիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Ինգա Մարկոսյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 15-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Արուսյակ Ավագյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 18-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-07-08 16:14:16 GMT+4
Հավաստված է ԷԿԵԼՀ-ի կողմից

eID

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ